# Վարդապետության սերտում. Գնահատում 1. ուսումնական ուղեցույց

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

## Անգիր սովորեք հղումը և սուրբ գրության հիմնական արտահայտությունը

Ծանոթացեք սուրբ գրությունների վարդապետության սերտման հատվածներին և սուրբ գրությունների հիմնական արտահայտություններին: Ներբեռնեք և օգտագործեք Doctrinal Mastery բջջային հավելվածը, որը կօգնի ձեզ կրկնելիս:

Մատթեոս 5.14-16 «Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին»:

Մատթեոս 11.28–30 «Իմձ մոտ եկեք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ. եւ ես հանգիստ կտամ ձեզ»:

Մատթեոս 16.15–19 Հիսուսն ասաց. «Ես կտամ քեզ երկնքի արքայութեան բանալիները»:

Մատթեոս 22.36–39 «Սիրիր քո Տէր Աստուծուն: … Սիրիր քո ընկերին»:

Ղուկաս 2.10-12 «Թէ այսօր ձեզ Փրկիչ ծնուեցավ Դաւիթի քաղաքումը. որ է Քրիստոս Տէրը»:

Ղուկաս 22.19–20 Հիսուս Քրիստոսը պատվիրեց՝ ճաշակեք հաղորդությունը «իմ յիշատակի համար»:

Ղուկաս 24.36–39 «Ոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ»:

Հովհաննես 3.5 «Եթե մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայությունը մտնել»:

Հովհաննես 3.16 «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ»:

Հովհաննես 7.17 «Եթե մէկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար»:

Հովհաննես 17.3 «Եվ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած և Յիսուսին Քրիստոսին»:

## Կիրառեք վարդապետությունը իրական կյանքում

- Օգտագործեք վարդապետության սերտման մեկ կամ մի քանի հատված՝ պատասխանելով նրան, ով հարցնում է. «Նոր Կտակարանն ի՞նչ է ուսուցանում այն մասին, թե ինչպես կարելի է ձեռք բերել անձնական վկայություն, որ Եկեղեցում ուսուցանված վարդապետությունն Աստծուց է»:
- Եթե դուք որևէ մեկին ուսուցանեիք նրա հանդեպ Աստծո սիրո մասին, Նոր Կտակարանի վարդապետության սերտման ո՞ր հատվածները կօգտագործեիք: Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս հատվածները՝ Աստծո սերը բացատրելու համար:

Պատրաստ եղեք կիսվելու ձեզ վրա ամենամեծ ազդեցությունը թողած վարդապետության սերտման հատվածներով: Այս հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

## Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները

Կարդացեք «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի 5-12-րդ պարբերությունները, որոնք գտնվում են *Վարդապետության սերտման հիմնական փաստաթղթում* (2022):

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 1—Study Guide*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.